# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
## ՇԻՐԱԿԱՄՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

գ. Շիրակամուտ

N— Ե -03/117

«05» 06. 2018թ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Հ.ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Մարգարյան

Ձեզ ենք ներկայացնում Շիրակամուտ համայնքի ավագանու թիվ 22-Ա, թիվ 23-Ն և թիվ 24-Ա որոշումները :

Առդիր 4 էջ:

Համայնքի ղեկավար՝ Ա.Երանոսյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

## ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք,հեռ.0255-6-15-01

## ՈՐՈՇՈՒՄ
,, 30" մայիսի 2018 թվականի N22-Ա

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018Թ. ՄԱՅԻՍԻ 30-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,, Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ համայնքի ավագանին որոշում է

Հաստատել Շիրակամուտ համայնքի ավագանու 2018թ. մայիսի 30-ի հերթական նիստի օրակարգը

ՕՐԱԿԱՐԳ

1. ՀՀ Լոռու մարզի Շիրակամուտ համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 21-ի << Շիրակամուտ համայնքի 2018 թվականի բյուջեն հաստատելու մասին>> թիվ 33-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
2.Շիրակամուտ համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին դրամական օգնություն հատկացնելու մասին:

| Համայնքի ավագանու անդամներ | կողմ/5 / | դեմ /0 / | ձեռնպահ/ 0 / |
|---|---|---|---|
| Ա.Կյուրեղյան | | | |
| Հ.Նալբանդյան | | | |
| Ա.Պապոյան | | | |
| Ն.Նասյան | | | |
| Հ.Մազմանյան | | | |

Համայնքի ղեկավար Ա.Երանոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք,հեռ.0255-6-15-01

# ՈՐՈՇՈՒՄ

,, 30 " մայիսի 2017 թվականի N23 -Ն

## ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21 -Ի ԹԻՎ33 -Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, << Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով՝Շիրակամուտ համայնքի ավագանին որոշում է.

Փոփոխություն կատարել Շիրակամուտ համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 21-ի << Շիրակամուտ համայնքի 2018 թվականի բյուջեն հաստատելու մասին>> թիվ 33-Ն որոշման մեջ.

1. Շիրակամուտ համայնքի 2018թ. Բյուջեի 06/04/01 դասակարգման 5112 հոդվածից 300,0/երեք հարյուր /հազար դրամ տեղափոխել 06/03/01 դասակարգման 5122 հոդված՝ համայնքի արոտավայրերում խմոցներ տեղադրելու համար:
2. պահուստային ֆոնդի 11/01/02 դասակարգման 4891 հոդվածից 500,0/հինգ հարյուր/հազար դրամ տեղափոխել 04/05/01 դասակարգման 4251 հոդված՝,, Ալմալու,, արոտավայր տանող ճանապարհները վերանորոգելու համար:
3. Բյուջեի տողերը համարել փոփոխված սույն որոշման 1-ին,2-րդ, կետերից բխող փոփոխություններին համապատասխան:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող տասներորդ օրը:

| Համայնքի ավագանու անդամներ | կողմ/5 / | դեմ /0 / | ձեռնպահ/ 0 / |
|---|---|---|---|
| Ա.Կյուրեղյան | | | |
| Հ.Նալբանդյան | | | |
| Ա.Պապոյան | | | |
| Ն.Նասլյան | | | |
| Հ.Մազմանյան | | | |

Համայնքի ղեկավար՝ Ա.Երանոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք,հեռ.0255-6-15-01

# ՈՐՈՇՈՒՄ

,,30''-ը մայիսի 2018թվականի N24 -Ա

## ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, համայնքի ավագանու 2017 թվականի հուլիսի 17-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շիրակամուտ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 16-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով Շիրակամուտ համայնքի բնակիչների դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունը՝

Շիրակամուտ համայնքի ավագանին որոշում է.

1.. Շիրակամուտ համայնքի 2018թ. բյուջեի 10.7.1 դասակարգման 4729 հոդվածից հատկացնել դրամական օգնություն՝ թվով 2 բնակչի՝ յուրաքանչյուրին 30000,0/երեսուն հազար/դրամ, համաձայն հավելվածի:
2.Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում հատկացված գումարը տրամադրել բնակիչներին:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

| Համայնքի ավագանու անդամներ | կողմ/4 / | դեմ /0 / | ձեռնպահ/ 0 / |
|---|---|---|---|
| Ա.Կյուրեղյան | | | |
| Հ.Նալբանդյան | | | |
| Ա.Պապոյան | | | |
| Ն.Նասլյան | | | |
| | | | |

Համայնքի ղեկավար՝ Ա.Երանոսյան

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Շիրակամուտ համայնքի ավագանու
2018 թվականի մայիսի 30--ի N 24-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԻՐԱԿԱՄՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1. Մազմանյան Ալֆերիդա Գնորգի --երեսուն հազար դրամ, / սոց. օգնություն/.
2. Մարտիրոսյան Քնարիկ Հրաչիկի - երեսուն հազար դրամ, / սոց. օգնություն/.

ՇԻՐԱԿԱՄՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ.ԵՐԱՆՈՍՅԱՆ